

նել», ինչպէս իրաւացի կերպով կը դիտէ Փաւստոս ճաշի մ'առթիւ (236):

Ա. Սեղանները դրուած են արդէն հըրաւիրելոց չափով, ու ծածկուած ընտիր սփռոցներով (աստ, 51): Եւ անոնց շուրջ բազմակներ, կամ ազնուական տաճարաց մէջ բարձրագանք, գահոյք կամ գանք (աստ, 52-4, 105), որ Ռուբինեանց օրով կը փոխուին «սկանակաւ բազմակներաց» (Լմբ. Պտր. 459) կամ թիկնաթոռոց՝ ըստ հին պատկերաց (Սխ. 481) եւ համեմատ ժամանակի եւրոպական սովորութեան, դեռ նոր բերուած ու շարուած են հրաւիրելոց թուով, ինչպէս յայտնի է «արկանեղ բազմականս» (Փաւս. 207, 168. Ազթ. 53) կամ «կարգել բազմականս» (Փաւս. 67) բացատրութենէն: Եւ կը փայլին իրենց շքեղութեամբ, ոսկեշող երանգով, շողշողուն քարերով, եւ իրենց վրայ ձգուած գունագեղ տա գաստակօք ու բարձերով (աստ, 55-6): Սպասներն՝ ոսկեղէն կամ արծաթեղէն՝ զորս թուեցինք (աստ, 57-67), հաւանօրէն պատրաստ են արդէն մասամբ՝ մեկուսի դրուած յատուկ սեղանոց վրայ (աստ, 51), ինչպէս են տարգալները, պատառաքաղները, դանակները, պնակներն ու սկտեղները. եւ մասամբ ներս պիտի բերուին իրենց կարգին: